ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-6-4-Ա

ք. Երևան 08.07.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հուլիսի 8-ի նիստում քննարկեց 2019 թվականի հունիսի 20-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ PepsiCo, Inc. (a North Carolina corporation) (700 Anderson Hill Road Purchase NY 10577, US) ընկերության բողոքը (IR1390608) «ХРУС team STIX» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հիմք ընդունելով Ապրանքային նշանների մասին ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը, Գործակալությունը որոշում է՝ ուժի մեջ թողնել մերժման մասին որոշումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված նիշը որպես ապրանքային նշան ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն: Ինչ վերաբերում է Ձեր նկատառումներին, առ այն, որ «STIX» բառը չի մատնանշում հայտարկված ապրանքների և ոչ մի հատկություն, ցանկանում ենք նշել այն փաստը, որը վերջինս օրինաչափ ձևով օգտագործվում է տարբեր բնագավառի տնտեսվարող սուբյեկտների կողմից նշելու համար հենց ապրանքի ձևը (STIKS), որի մասին բազմաթիվ օրինակներ կարող եք տեսնել համացանցում (https://www.google.com/search?q=stix&rlz=1C1CHBD_enAM756AM756&source=lnms&tbm=isch&sa=X&ved=0ahUKEwiby aPrlu3hAhUstIsKHZwlBQQQ_AUIDigB&biw=1920&bih=937#imgrc=0gB2GDzQ2QBAyM:):

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու,

կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է հայտարարություն «STIX» բառի նկատմամբ բացառիկ իրավունքից հրաժարվելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «ХРУС team STIX» (IR1390608) ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ